Զանազանման

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն

Հավատո Հանգանակ

Հավատում եմ Միասնական Աստծուն՝

Երկնքի ու Երկրի Արարչին,

որ ներկա է համայն Կյանքում:

Հավատում եմ Նրա Օրենքի արդարությանը,

և հնազանդորեն ենթարկվում եմ

Նրա Օրենքի Իմաստությանը:

Հավատում եմ Երկնքի Արքայությանը՝

ինչպես Երկրի վրա, այնպես էլ Երկնքում:

Հավատում եմ Աստծո Միասնությանը՝

Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն

Հայր մեր

Հայր մեր, որ Երկնքում ես,

սուրբ լինի Քո Անունը.

Քո Թագավորությունը գա.

Քո Կամքը լինի Երկրի վրա, ինչպես որ Երկնքում է.

մեր ամենօրյա հացը տուր մեզ այսօր,

և ներիր մեր մեղքերը,

ինչպես որ մենք ենք ներում մեզ պարտք եղողներին.

և մի տանիր մեզ փորձության,

այլ փրկիր մեզ չարից,

քանզի Քոնն է արքայությունը

և զորությունը և փառքը հավիտենական.

Ամեն

Աստվածամայր

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

Զանազանման կարողություն ձեռք բերելու անհրաժեշտությունը

Հայր մեր

1. Զանազանման շնորհը ձեզ անհրաժեշտ է, ինչպես երբեք: Եվ այդ շնորհի հետ մեկտեղ դուք պետք է գիտելիք ստանաք այն մասին, թե ինչպես պետք է ձեզ պահեք էվոլյուցիոն զարգացման այս փուլում, ինչին պետք է ձգտեք և ինչպիսի սկզբունքներով առաջնորդվեք:

Աստվածամայր

2. Մենք կարող ենք բավական երկար թվարկել այս կամ այն կրոնական ուսուցչի կամ կրոնական ուղղությունների թերությունները: Բայց դրանով հանդերձ՝ մենք միայն կուսումնասիրենք, թե ինչպես չպետք է վարվել և ինչպես չպետք է պահել իրեն:

Աստվածամայր

3. Մենք ընտրել ենք ա՛յլ ճանապարհ: Մենք տալիս ենք ճշմարիտ օրինակներ և տալիս ենք ճշմարիտ ուղղություն: Եվ ինչպես միշտ՝ ձեր ազատ կամքով ինքնե՛րդ պետք է ընտրեք, թե որ ուղով ընթանաք:

Աստվածամայր

4. Դու՛ք եք ընտրություն կատարում, և դու՛ք եք որոշում կայացնում: Մեր գործն է՝ առաջարկել ճիշտ օրինակներ և ցույց տալ ճշմարիտ ուղղությունը:

Աստվածամայր

5. Ամբողջ բանն այն է, որ դուք այնքան եք խճճված պատրանքի ցանցերում, որ չեք կարող ջոկել ո՛չ այն, թե որ աղբյուրն է ճշմարտություն պարունակում, ո՛չ էլ այն թրթռանքները, որոնք բնորոշ են ճշմարիտ աղբյուրին:

Աստվածամայր

6. Ըստ այդմ՝ ձեր բոլոր գործառություններն ու գործողությունները պետք է ուղղված լինեն այն բանին, որպեսզի սովորեք զանազանել:

Աստվածամայր

7. Ըստ էության, պատրանքի մեջ ձեր գտնվելն իր ավարտը կունենա միայն այն ժամանակ, երբ կսովորեք տարբերակում մտցնել այն իրադարձությունների միջև, որոնք պատկանում են պատրանքի պլանին, և այն իրադարձությունների միջև, որոնք պատկանում են Աստվածային աշխարհին:

Աստվածամայր

8. Եվ ձեր խնդիրն է՝ ձեռք բերել պայծառ հայացք և սովորել գնահատական տալ ամեն մի իրողության ու փաստի, որի հետ կյանքում բախվում եք:

Աստվածամայր

9. Իմաստուն մարդիկ չեն շտապում առնչվել մի տեղեկատվության հետ, որը գալիս է անծանոթ աղբյուրից: Եվ դա ճիշտ վարքագիծ է: Եթե դուք անխտիր ամեն ինչ կլանեք, ապա ձեր ուղեղն այլևս չի կարող մարսել:

Աստվածամայր

10. Հարկ է, որ ձեզ շրջապատող իրականությունից մանրակրկիտ ձևով ընտրեք այն տեղեկատվությունը, որն արժանի է ձեր ուշադրությանը և տարբերվում է այն ամբողջ աղբից, որն առատորեն տեղ է գտել ձեր գրախանութների դարակներում և ինտերնետում:

Աստվածամայր

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

Հանձնարարականներ Զանազանման վերաբերյալ

Հայր մեր

1. Մեր խնդիրն է՝ ո՛չ միայն տեղեկատվություն տալ, այլ նաև գիտելիք տալ այն մասին, թե ինչպես ձեզ շրջապատող տեղեկատվության ծովում ճշմարիտ տեղեկատվությունը զանազանեք կեղծից:

Աստվածամայր

2. Ձեզ հայտնի է, որ խիստ որոշակի չափանիշներ չկան: Եվ մշտապես, երբ խոսքը հասնում է զանազանմանը, մենք ձեզ առաջարկում ենք մուտք գործել ձեր սիրտը և ընտրելն ու գնահատելը վստահել ձե՛ր իսկ Բարձրագույն մասին:

Աստվածամայր

3. Քանզի ձեր Բարձրագույն մասը միշտ գիտի Ճշմարտությունը: Սակայն միշտ չէ, որ ձեր Բարձրագույն մասին դիմելու միտքը ծագում է ձեր գլխում:

Աստվածամայր

4. Ես էլ չեմ ասում այն մասին, որ ձեր ստորին մարմինների մաքրությունը կարող է բավարար չլինել, որպեսզի զգաք ու տարբերեք Բարձրագույն Ես-ի ձայնը:

Աստվածամայր

5. Ուստի տեղին կլինի բերել արտաքին չափանիշներ, որոնց հիման վրա դուք կկարողանաք տարբերակում մտցնել ձեր շրջապատի տեղեկատվության հոսքում:

Աստվածամայր

6. Նախ և առաջ ուշադրություն դարձրեք ոչ թե գրքի կազմի ու նրա արտաքին տեսքի վրա, այլ առաջին հերթին ուշադրություն դարձրեք տեղեկատվության մատուցման որակի վրա: Եվ եթե տեղեկատվությունը չի տրվում ձեզ համար հասկանալի մակարդակով, ապա դադարեցրե՛ք կարդալը:

Աստվածամայր

7. Բանն այն է, որ գոյություն ունեն տեղեկատվության մատուցման շատ տարբեր մակարդակներ: Եվ այն, ինչը մատչելի է մեկի գիտակցության համար, կարող է մատչելի չլինել մի ուրիշի գիտակցության համար:

Աստվածամայր

8. Ո՛չ միշտ է, որ բարդ տեքստի հետևում Ճշմարտությունն է: Սակայն, եթե դուք հասել եք ձեռնադրումների բարձր աստիճանի, ապա գրախանութների դարակներում միշտ կգտնեք այն բանալիները, որոնք թույլ կտան ձեզ ամենախրթին տեղերում ճանաչելու Ճշմարտությունը:

Աստվածամայր

9. Նախկինում մենք միջոցներ էինք ձեռնարկում, որպեսզի դիտավորյալ կերպով խճողենք մեր ուղերձները: Նման դեպքում մենք ձգտում էինք խրտնեցնել նրանց, ովքեր ձգտում էին մեր տեղեկատվությունն օգտագործել շահադիտական նպատակներով:

Աստվածամայր

10. Այժմ մենք հակված չենք բարդացնելուն: Քանզի միշտ էլ կարելի է բարդացնել տրվող տեղեկատվությունը, բայց նրա էությունը, որպես կանոն, շատ պարզ է և մատչելի՝ նույնիսկ երեխայի համար:

Աստվածամայր

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

Ձանազանման որոշ սկզբունքներ

Հայր մեր

1. Որքան էլ թափառեք, այսպես կոչված, էզոթերիկական գրականության թավուտներում, մենք խորհուրդ ենք տալիս վեր հանել հայացքը մատուցվողի էությունից և պատասխանել մի պարզ հարցի. որքանո՞վ է ձեր կարդացածը ձեզ օգնում ձեր իրական կյանքում:

Աստվածամայր

2. Օգնու՞մ է ձեզ արդյոք այն տեղեկատվությունը, որը կարդում եք, որպեսզի ազատվեք ձե՛ր իսկ անիրական մասից և մղվեք դեպի հավերժական, անանց իրականությունը:

Աստվածամայր

3. Ի՞նչ է տալիս այն տեղեկատվությունը, որը կարդում եք, ձեր հոգու զարգացման համար: Ինչպե՞ս է այդ տեղեկատվությունն օգնում ձեզ ձեր կյանքում:

Աստվածամայր

4. Դուք կարող եք խորհուրդներ ստանալ շատ ճարտար գործառությունների շուրջ, բայց այդ գործառությունները կա՛մ կտանեն դեպի ձեզ շրջապատող պատրանքի բազմապատկմանը, կա՛մ էլ կհեռացնեն ձեզ ձեր առաքելությունից և պատրանք կստեղծեն, թե դուք տիեզերական մասշտաբով հանդիսանում եք շատ նշանակալից էակ:

Աստվածամայր

5. Ե՛վ մեկ, և՛ մյուս դեպքում դուք կկորցնեք հենակետը ձեր գիտակցության մեջ: Կա՛մ կխորասուզվեք մատերիայի մեջ, կա՛մ էլ կճախրեք ամպերից վեր:

Աստվածամայր

6. Բայց ընդհանուրն այն է, որ արդյունքում դուք միայն պատրանք եք ծնում և արարում այդ պատրանքը կա՛մ ֆիզիկական, կա՛մ աստեղային ոլորտում:

Աստվածամայր

7. Ձեր խնդիրն է՝ մշտապես իրատեսական հայացք պահպանել աշխարհում ձեր ունեցած դիրքի վերաբերյալ:

Աստվածամայր

8. Իսկ ձեր իրական դիրքն է՝ ոտքերով ամուր կանգնել Երկրին և միաժամանակ հիշել ձեր տիեզերական ծագման մասին ու մղվել դեպի Աստված:

Աստվածամայր

9. Մղումը դեպի Աստված չպետք է շփոթել տիեզերական հիերարխիայում բարձր դիրք գրավելու ձգտման հետ:

Աստվածամայր

10. Այո՛, չի բացառվում, որ ձեզնից շատերի ներսում նստած են Բարձրագույն Տիեզերական Էակներ, ովքեր իջել են Երկիր և օգտվում են յուրաքանչյուր հնարավորությունից, որպեսզի օգնեն Երկրի քաղաքակրթությանը: Սակայն երբեք մի՛ մոռացեք, որ ձեր հոգին երկրային էվոլյուցիա է անցնում: Իսկ այդ էվոլյուցիան աստիճանական բնույթ ունի:

Աստվածամայր

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

Ձեր էգո՛ն է խոչընդոտում ձեր Զանազանման գործին

Հայր մեր

1. Դուք չեք կարող ընդամենը մի կյանքի ընթացքում միանգամից դառնալ Մեծ Տիեզերական Էակ: Թեև կարող եք թույլ տալ Բարձրագույն Տիեզերական Էակին գործելու ձեր միջոցով, բայց հաճախ դրա փոխարեն աստեղային ոլորտի էակներին եք թույլ տալիս գործելու ձեր միջոցով: Ո՞րն է չափանիշը: Ինչպե՞ս հասկանալ ու զանազանել:

Աստվածամայր

2. Դուք գիտեք, որ որպեսզի Բարձրագույն Տիեզերական Էակները կարողանան գործել ձեր միջոցով, դուք պետք է հրաժեշտ տաք ձեր էգոյի մեծագույն մասին և ձեռնամուխ լինեք Տիեզերական Հիերարխիային ծառայելուն:

Աստվածամայր

3. Որպեսզի ձեզ ստրկության մատնեք աստեղային ոլորտի էակին, բոլորովին ձեզնից չի պահանջվում ոչ մի նվաճում, բացի ձեր էգոյի ինքնամեծարման ցանկությունից:

Աստվածամայր

4. Շատ մարդիկ, տարբեր տեսակի մակերեսային գրականություն ընթերցելով, իրենց դնում են տիեզերական հիերարխիայում բարձր դիրք զբաղեցնող շատ մեծ էակների տեղ:

Աստվածամայր

5. Եվ այդ մարդիկ այնքան են տարվում իրենց խաղով, որ կորցնում են զանազանելու կարողությունը: Դեռ ավելին՝ նրանք չեն էլ մտահոգվում, որ կարողանան ինչ-որ բան զանազանել, որովհետև համոզված են իրենց բացառիկության ու մեծության մեջ:

Աստվածամայր

6. Սակայն շրջապատի մարդկանց համար մի քանի րոպեի զրույցից արդեն պարզ է դառնում, թե ում հետ գործ ունեն: Ուստի մենք ձեզ խնդրում ենք, որ զարգացնեք զանազանման շնորհը ձե՛ր իսկ ներսում:

Աստվածամայր

7. Մենք ձեզ ասում ենք, որ նախ և առաջ՝ առաջին հերթին, պետք է ազատվել սեփական էգոյից: Քանզի ձեր էգոն խանգարում է ձեր զանազանելու գործին, ձեր դիտողունակությանն ու ձեր ծառայությանը:

Աստվածամայր

8. Շա՛տ ափսոս այն անհատներին, ովքեր գնացել են ինքնամեծարման ուղով: Սակայն դա նրանց ընտրությունն է եղել: Եվ նրանք կատարել են հենց այն ընտրությունը, որը ցանկացել են կատարել:

Աստվածամայր

9. Ձեր պատրանքային աշխարհն աչքի է ընկնում նրանով, որ յուրաքանչյուրը ստանում է այն, ինչին ձգտում է: Եվ եթե դուք ուզում եք դառնալ Բարձր Տիեզերական Էակ, ապա անպայման կդառնաք: Եվ նուրբ պլանից դուք կստանաք բոլոր այն նշանները, որոնք կհաստատեն, որ դուք Բարձր Տիեզերական Էակ եք:

Աստվածամայր

10. Ամբողջ գործն այն է, որ տվյալ դեպքում ձեր շարժառիթը հենց սկզբից ճիշտ չի լինում: Դուք ցանկանում եք դառնալ հզոր էակ: Իսկ ճշմարիտ շարժառիթն այն կլիներ, եթե ուզենայիք դառնալ ամենահնազանդ էակը՝ Երկրի վրա ապրող բոլոր կենդանի էակների հլու ծառան: Ճշմարիտ շարժառիթն այն կլիներ, որ ազատվեիք ձեր էգոյից և օգնեիք բոլոր կենդանի էակներին:

Աստվածամայր

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

Զանազանման բանալին այն շարժառիթն է,

որով առաջնորդվում եք

Հայր մեր

1. Ձեզ անհրաժեշտ չէ, որ դուք մյուս մարդկանցից հաստատում ստանաք ձեր, ինչպես դուք եք կարծում, տիեզերական նվաճումների մասին:

Աստվածամայր

2. Բայց նախ պետք է պարզապես պատասխանեք այն հարցին, թե ինչպիսի՞ն է եղել ձեր շարժառիթը, երբ ձեռնամուխ եք եղել, օրինակ, էզոթերիկական գրականության ուսումնասիրմանը:

Աստվածամայր

3. Ցանկացել եք ձեզ համա՞ր ինչ-որ բան ստանալ, թե՞ ցանկացել եք ամեն ինչ ներդնել կյանքին ծառայելու համար:

Աստվածամայր

4. Առաջին հայացքից Աստվածային գիտությունը շատ պարզ է թվում, սակայն շատ-շատերն այնքան են հեռու գնում կեղծ հասկացությունների ու գիտելիքների լաբիրինթոսներով, որ մեր օգնությունն ստանա՛լն իսկ նրանց համար դառնում է պրոբլեմային հարց:

Աստվածամայր

5. Ուստի իմ խորհուրդը հետևյալն է. մշտապես, նախքան որևէ ուսմունքի մեջ խորանալը, որևէ գործառության կամ ուսուցչի հետևելը, ուշադրությամբ վերլուծության ենթարկեք այն շարժառիթը, որով առաջնորդվում եք:

Աստվածամայր

6. Քանզի դուք ձեր թրթիռներով ու ձեզ շարժման մեջ դնող ներքին ցանկություններով ձգվում եք դեպի այն մարդկանց խմբի կամ ուսուցիչների կողմը, ովքեր ձեզ կմատուցեն հենց այն, ինչն անհրաժեշտ է ձեզ ձեր նպատակներին հասնելու համար:

Աստվածամայր

7. Եվ ձեզնից դուրս գտնվող ոչ մեկին այդ դեպքում մի՛ մեղադրեք, որ դուք ուռկանն եք ընկել, կամ ընկել եք ինչ-որ մեկի ազդեցության տակ:

Աստվածամայր

8. Քանզի դուք և միայն դու՛ք եք պատասխանատու այն ամենի համար, ինչը ձեզ հետ տեղի է ունենում:

Աստվածամայր

9. Դուք եկել եք աշխարհ, որպեսզի զանազանելու դաս ստանաք՝ Բարին Չարից զանզանելու, պատրանքը իրականությունից զանզանելու դաս:

Աստվածամայր

10. Ինքնե՛րդ ձեր դասերը քաղեք: Եվ հիշեք, որ մենք կարող ենք ձեզ օգնել միայն այնժամ, երբ դուք օգնություն եք խնդրում:

Աստվածամայր

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն